600.227.13.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2018 թվականի №227Ա

քաղ. Երևան

«ԼՈՒՍԱԿՈՒՆՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՅՐՔ ՓՀԷԿ-1» ԵՎ «ԱՅՐՔ ՓՀԷԿ-2» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի №217Ա ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի №181Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն, 2018 թվականի մայիսի 30-ի №180Ն որոշումները և հաշվի առնելով «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի մայիսի 25-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝
   1) «Այրք ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 23,864 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 28,637 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
   2) «Այրք ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 23,864 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 28,637 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2017 թվականի մայիսի 31-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №217Ա որոշման 1-ին կետի 60-րդ ենթակետը.

2) 2018 թվականի մայիսի 30-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №181Ա որոշման 1-ին կետի 60-րդ ենթակետը:

3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 13-ից և գործում է մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը, իսկ 2-րդ կետն ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունիսի 13–ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
13 հունիսի 2018թ.